# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ (2019-2024թթ.)

Հայաստանի Հանրապետության Հյուսիսային Համալսարանը և Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանը ստորագրել են սույն պայմանագիրը՝ գիտության, կրթության և հետազոտության մեջ ինստուցիոնալ համագործակցությանը նպաստելու համար:

Երկու կողմերն էլ միջազգային ակադեմիական համագործակցությանը օժանդակելու համար պետք է ծավալեն հետևյալ գործունեությունը.

-Կրթական նյութերի, հետազոտությունների, ակադեմիական տեղեկատվության փոխանակում:

-Միացյալ հետազոտական գործունեություն:

-Համատեղ գիտաժողովներ:

Համատեղ նախագծեր և ծրագրեր՝ կապված գիտության և կրթության հետ:

Մինչ գործունեության ծավալումը կողմերը պիտի քննարկեն ներկայացված հնարավորությունները և մարտահրավերները, ապա զան ստույգ եզրահանգման՝ հիմնված փոխհամաձայնեցված նպատակների և արդյունքների վրա:

Սույն պայմանագիրն ուժի մեջ կլինի 5 տարի, եթե կողմերից մեկն ուզում է անվավեր ճանաչել պայմանագիրն ավելի վաղ, պետք է գրավոր ձևով տեղեկացնի մյուս կողմին: Երկու կողմերն էլ կարող են երկարաձգել պայմանագիրը՝ գրավոր փոխհամաձայնեցվածությամբ:

Յուրաքանչյուր կողմ պիտի ներկայացնի անձ, ով գործունեություն կծավալի այս ծրագիրն ի կատար ածելու համար:

| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ | ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ |
| ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ | « ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ |
| ՌԵԿՏՈՐ Բ.ՄԱԿԻՉՅԱՆ | ՌԵԿՏՈՐ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ |